Science and Education a New Dimension. Philology, IX(76), Issue: 260, 2021 Nov. www.seanewdim.com
The journal is published under Creative Commons Attribution License v4.0 CC BY 4.0

Քաղաքական խոսույթի գենդերային հայեցակերպը (խոսքային ագրեսիայի դրսևորումներ)

Ա.Տ.Կնյազյան[1]; Լ.Ի.Մարաբյան[2]

[1]Երևանի պետական համալսարան; [2]Եվրոպական Համալսարան
Corresponding authors. E-mail: annaknyazyan@ysu; marabyanliza@gmail.com

Paper received 01.10.21; Accepted for publication 18.10.21.

https://doi.org/10.31174/SEND-Ph2021-260IX76-07

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է կանանց և տղամարդկանց խոսքային ագրեսիային քաղաքական հեռուստաբանավեճերում: Գենդերային հատկանիշները լեզվում արտահայտվում են լեզվական կարծրատիպերի տեսքով, որոնք ազդում են տղամարդկանց և կանանց վարքագծի վրա: Խոսքային ագրեսիան տարբերվում է ուժգնությամբ և արտահայտման ձևով՝ հակակրանքի և չարամտության արտահայտումից մինչև խոսքային բռնություն: Կախված սեռից, գոյություն ունեն հուզական բառապաշարի օգտագործման տարբերություններ:

Բանալի բառեր: *գենդեր; ագրեսիա; խոսքային ագրեսիա; քաղաքական խոսույթ; հեռուստաբանավեճ; հաղորդակցություն*

Ժամանակակից լեզվաբանության մեջ դժվարությամբ, բայց հաստատուն կերպով ներմուծվեց հետազոտական մի նոր ոլորտ, որն ի սկզբանե բնախոսական տարր է ներառում և առնչվում մարդու հանրային գործունեության այն շերտերին, որոնք պայմանավորված են մարդաբանական առանձնահատկություններով: Ինչ խոսք, եթե լեզվաբաններն ընդունում են լեզվի և մտածողության փոխկապվածության դրույթը, ապա նրանք չեն կարող անտեսել բնագիտական, հոգեբանական, փիլիսոփայական, հասարակագիտական, ազգաբանական, մշակութաբանական ոլորտներում արված գիտական հետազոտությունների եզրահանգումներն այն մասին, որ մարդկանց սեռային պատկանելիությունն արտահայտվում է ոչ միայն նրանց ֆիզիկական կազմվածքի՝ կազմախոսական կամ բնախոսական տարբերությամբ, այլև հոգևոր ոլորտի՝ հոգեբանության, լեզվամտածողության, հասարակական վարքի դրսևորումների առանձնահատկություններով, մշակութային արժեքների գնահատման յուրօրինակությամբ: Անդրադառնալով գենդերային հետազոտությունների հայեցակարգային մոտեցումներից մեկին՝ գենդերի ճանաչողական զարգացման տեսությանը, կարելի է մեջբերել Ե. Կարտուշինայի դատողությունն այն մասին, որ արականությունը և իգականությունը ոչ թե ուղղակիորեն են արտացոլվում լեզվում, այլ գիտակցության միջոցով, որի ձևավորումն էլ գտնվում է լեզվի ազդեցության տակ [5]: Ուստի միանգամայն արդարացված է, որ լեզվաբանության խնդիրներից մեկը պետք է դառնա խոսքի վրա գենդերի, այսինքն՝ սոցիալական կամ հանրամշակութային սեռի, թողած ազդեցության ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրությունը: Իհարկե, լեզվի և հաղորդակցության գենդերային հայեցակերպը դեռևս ամենաքիչ ուսումնասիրված բնագավառն է գենդերային հետազոտությունների ընդհանուր միջգիտակարգային ոլորտում, իսկ յուրաքանչյուր նոր գաղափար կամ տեսակետ փաստերի միջոցով ապացուցելու, գիտական նորանոր հետազոտությունների միջոցով հաստատվելու կարիք ունի: Այս առումով սույն հետազոտությունը ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների արդիական ոլորտի է վերաբերում: Քննության են առնվում *խոսողի սեռ - խոսակցի սեռ* լեզվագործածության, այսինքն՝ խոսքային գործունեության առանձնահատկությունները որոշակի խոսքային իրադրության մեջ: Գենդերային հետազոտություններում դեռևս բաց է մնում գենդերի հանրամշակութային գործոնով պայմանավորված լեզվական համակարգի և լեզվագործածության, այսինքն՝ լեզվի և խոսքի, փոխհարաբերության հարցը: Գենդերային հետազոտություններ իրականացվում են ինչպես լեզվի մակարդակում՝ բառապաշար, դարձվածաբանություն, անվանաբանություն [8;1;9;7;2], այնպես էլ զանազան խոսույթներում՝ գրականություն և բանահյուսություն, քաղաքականություն [18;19], ոչ պաշտոնական շփումներ [17; 13; 16; 12;15] գիտական հաղորդակցություն [14]:

Գենդերային հետազոտությունների ուշադրության կենտրոնում են սոցիալական և մշակութային գործոնները, որոնք պայմանավորում են հասարակության վերաբերմունքը տղամարդկանց և կանանց նկատմամբ, անհատների վարքը՝ այս կամ այն սեռի պատկանելու առումով, կանանց և տղամարդկանց հատկությունների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները, այսինքն՝ այն ամենը, ինչը սեռի հիմնախնդիրը փոխադրում է կենսաբանության ոլորտից կյանքի սոցիալական և մշակութային ոլորտներ:

Մարդկանց առօրյա կյանքը, կարծրատիպերը, անհատի դերային դիրքորոշումները, գործողությունների գնահատումը մեծապես պայմանավորված են գենդերային փոխհարաբերություններով: *Գենդեր* եզրույթը վերաբերում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց զբաղեցրած դիրքին, նրանցից ակնկալվող վարքի նորմերին, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններին: Այդ իրողությամբ է պայմանավորված, որ այն ընկալվում է որպես *սոցիալական սեռ*, քանի որ բացի կենսաբանական սեռից, հասարակական կյանքում առկա են տարաբնույթ կարծրատիպեր և երևույթներ, որոնք վերագրվում են կանանց կամ տղամարդկանց: Գենդերը բացահայտում է հանրամշակութային կարծրատիպերի, փոփոխվող դերերի, կարգավիճակների, վարքի տարատեսակ դրսևորումների (ագրեսիա) և զգայական համակարգերի տարբերությունները[3]:

Սույն հոդվածի հետազոտության **առարկան** քաղաքական խոսույթն՝ ագրեսիայի լեզվական արտահայտման գենդերային բնութագրերի տեսանկյունից: Այս ուսումնասիրության **նպատակն է** բացահայտել ագրեսիվ հույզերի (զայրույթ) լեզվական արտահայտման գենդերային տարբերությունները, որոնք արտացոլված են քաղաքական խոսույթում (հեռուստաբանավեճերում)[4]: Նաև դիտարկվում են կարծրատիպեր, որոնք արտացոլում են ընդհանուր դատողություններ տղամարդկանց և կանանց բնորոշ հատկությունների և նրանց միջև գոյություն ունեցող տարբերությունների վերաբերյալ: Հաշվի են առնվում լեզուն և մշակույթը, բացահայտվում են ազգային-

 ©A. T. Knyazyan; Luiza I. Marabyan 2021

մշակութային և սոցիալ-մշակութային կարծրատիպերի հասկացությունները:

Ագրեսիան հետազոտության առարկա է բազմաթիվ գիտական ոլորտներում, ինչպիսիք են սոցիոլոգիան, հոգեբանությունը, լեզվաբանությունը, դատաբժշկական փորձաքննությունը և այլն: Քանի որ խոսքային ագրեսիան բավականին ընդգրկուն երևույթ է, հետազոտողները բազմիցս փորձել են մշակել չափանիշներ, որոնք թույլ կտան հստակ սահմանազատել խոսքային ագրեսիայի դրսևորումները համանման երևույթներից: Ակտիվորեն մշակվում են նաև դասակարգման հիմունքներ, որոնք կոչված են տարաբնույթ փաստական նյութը կանոնակարգելու և ագրեսիվ ներգործության ուժի մասին դատողություններ անելու: Հոգեբանության մեջ գոյություն չունի ագրեսիայի ընդունված սահմանում: Առավելագույնս ընդգրկուն մոտեցմամբ ագրեսիվ է որակվում ցանկացած մոտեցում, որ պարունակում է սպառնալիք կամ վնաս է հասցնում ուրիշներին: Մյուս մոտեցումը ենթադրում է, որ պարտադիր պետք է առկա լինի այլ մարդկանց մարմնական կամ ֆիզիկական վնասվածքներ հասցնելու մտադրությունը: Արդի ժամանակաշրջանում խոսքային ագրեսիան ավելի ու ավելի հաճախ է դառնում հոգելեզվաբանների ուշադրության առարկան[10;6]: Ագրեսիայի հասկացությունը ներառում է, ոչ միայն ֆիզիկական այլև խոսքային գործողություններ: Ագրեսիան բարդ սոցիալական վարք է ՝ տարաբնույթ պատճառներով և դրսեւորումներով:

Մեր հետազոտության մեջ որպես ագրեսիայի աշխատանքային սահմանում ընդունել ենք Ռ. Բարոնի և Դ. Ռիչարդսոնի տեսակետը: Ագրեսիան վարքի ցանկացած ձև է, որը նպատակաուղղված է անարգելու և վնաս հասցնելու մեկ այլ կենդանի արարածի, որը չի ցանկանում նման վերաբերմունք իր նկատմամբ [11]: Ագրեսիայի բնութագրման փորձի հիման վրա Կ. Ֆ. Սեդովն առաջարկել է 10 հակադրությունների զույգեր. 1. խոսքային – ոչ խոսքային, 2. ուղղակի – անուղղակի, 3.գործիքային – ոչ գործիքային, 4. նախաձեռնող – արձագանքող, 5. ակտիվ – պասիվ, 6. անմիջական – միջնորդավորված, 7. հանպատրաստից – նախապատրաստված, 8. հուզական – բանական, 9. ուժեղ – թույլ, 10. թշնամական – ոչ թշնամական [6 էջ 20 – 27]:

Խոսքային և ոչ խոսքային ագրեսիան սահմանազատելու համար հիմք է ծառայում նշանային արտահայտչամիջոցների բնույթը: Բացի բուն լեզվական միջոցներից, գոյություն ունեն ագրեսիա արտահայտելու ոչ խոսքային միջոցներ (օրինակ՝ ժեստերը, նշանակալի լռությունը): Ուղղակի ագրեսիան պարունակում է բացահայտ թշնամանք, անուղղակին դրսևորվում է միջնորդավորված ձևով (քմծիծաղ, ծաղր, հեգնանք): Ոչ գործիքային ագրեսիան պարունակում է թշնամական խոսողական-կատարողական ակտ, գործիքային ագրեսիան՝ որևէ այլ նպատակի հասնելու ձգտում: Նախաձեռնողական ագրեսիան հարձակման միջոց է, իսկ արձագանքողը՝ պատասխան արձագանքը: Ակտիվ և պասիվ ագրեսիայի տարանջատումը հիմնվում է խոսողի դիրքորոշման վրա. կարելի է արձագանքել ագրեսիային հարձակողականությամբ, բայց կարելի է ընդունել նաև *ինձ հանգիստ թողեք* կեցվածքը: Ագրեսիայի անմիջական և միջնորդավորված տարատեսակները տարբերվում են հաղորդակցային ակտի տարածաժամանակային բնութագրերով: Նախապատրաստված ագրեսիան մտածված հաղորդակցային ակտ է, որը թշնամանք է պարունակում: Հանպատրաստից ագրեսիա հաճախակի կարելի է տեսնել առօրյա հաղորդակցության ընթացքում: Ագրեսիայի հուզական և բանական տարատեսակները տարբերվում են բանական հիմքի ներկայությամբ (բացակայությամբ): Ուժեղ և թույլ, ինչպես նաև թշնամական և ոչ թշնամական ագրեսիաների առանձնացումը պայմանավորված է հաղորդակցային ակտի հուզական ներգործության ուժով և դրա ուղղվածությամբ [6 էջ 20 – 27]:

Քաղաքական խոսույթում տղամարդիկ ավելի հաճախ են հանդես գալիս որպես ագրեսիայի անմիջական նախաձեռնողներ, որոնք հագեցած են լինում նաև վիրավորանքներով: Վերլուծության արդյունքում պարզաբանվում է, որ տղամարդկանց խոսքը աչքի է ընկնում ագրեսիվության, հակիրճության և գերազանցության զգացում արտահայտող լեզվական միավորների կիրառությամբ: Սակայն կարելի է նաև նկատել, որ տղամարդիկ հաճախ անկարող են արտահայտել և նկարագրել իրենց հուզավիճակը, մասնավորապես՝ ջերմ վերաբերմունքը, հոգատարությունը, թախիծը կամ ցավը: Նրանք գլխավորապես վերբալացնում են միայն մեկ հույզ՝ զայրույթը, մինչդեռ կանանց խոսքը առանձնանում է մեղմություն, զիջողություն և զգացմունքայնություն արտահայտող լեզվական միավորների առատությամբ: Մի շարք գործոններ կարող են ազդել ագրեսիայի դրսևորումների վրա, ինչպիսիք են կենսաբանական, սոցիալական և ֆիզիկական: Ըստ կենսաբանական գործոնի՝ տղամարդիկ ավելի շատ են կիրառում ֆիզիկական ագրեսիա, քան կանայք: Կանայք ավելի հաճախ օգտագործում են խոսքային ագրեսիա: Սակայն հիմքեր չկան ենթադրելու, որ կանայք ավելի քիչ ագրեսիվ են և ավելի քիչ են հակված խոսքային կոնֆլիկտի մեջ մտնելու, քան տղամարդիկ: Ըստ այդմ, չպետք է ակնկալել, որ կանայք իրենց նպատակին հասնելու համար մշակում և օգտագործում են ճիշտ նույն ռազմավարությունը, ինչ տղամարդիկ:

Ընդհատումները ևս համարվում են լեզվական ամենանշանակալից ռազմավարություն, որն օգնում է գերիշխանության հասնելուն, քանի որ ընդհատել ինչ որ մեկին նշանակում է զրկել կամ ամենաքիչը՝ փորձել զրկել նրանց խոսելու իրավունքից: Տղամարդու և կնոջ հեռուստաբանավեճերում մեծամասամբ տղամարդիկ են գերիշխում, հատկապես եթե նրանք տիրապետում են քննարկվող թեմային: Նրանք գերակայություն են վերցնում՝ ընդհատելով, մենաշնորհելով բանավեճը և նույնիսկ վերահսկում թեմայի զարգացումը:

Սույն հոդվածում վերլուծության ենք ենթարկել երեք հեռուստաբանավեճեր 2016 թվականի Միացյալ Նահանգների նախագահական ընտրությունների քարոզարշավից: Ընտրարշավի երկու առավել հայտնի թեկնածուներն էին

Հանրապետական կուսակցությունը ներկայացնող Դոնալդ Թրամփը և Դեմոկրատական կուսակցության թեկնածու Հիլարի Քլինթոնը:

Նախագահի առաջին բանավեճը տեղի ունեցավ սեպտեմբերի 26-ին Հոֆստրայի համալսարանում[20]:Բանավեճի ավարտին ժամացույցը ցույց տվեց, որ Թրամփը խոսել էր 45 րոպե 3 վայրկյան, մինչդեռ Քլինթոնը խոսել էր 41 րոպե և 50 վայրկյան, որտեղ Թրամփը 51 անգամ ընդհատեց Քլինթոնին, իսկ Քլինթոնը Թրամփին՝ 17 անգամ:

Նախագահի երկրորդ բանավեճն անցկացվեց

«քաղաքապետարանի նիստի ձևաչափով՝առանց ամբիոնների և մասնակիցներին թույլատրվեց ազատ շարժվել բանավեճի ժամանակ[21]: Այն տեղի ունեցավ հոկտեմբերի 9-ին Միսսուրիի Սենթ Լուիս քաղաքի Վաշինգտոնի համալսարանում: Ամբողջ բանավեճը բնութագրվում էր ագրեսիվ, քանի որ Թրամփը բազմիցս խոսում էր սպառնալիքներով և ուներ ագրեսիվ դեմքի արտահայտություն: Թրամփը ընդհատեց Քլինթոնին 18 անգամ, մինչդեռ Քլինթոնը ընդհատեց Թրամփին մեկ անգամ:

Նախագահի երրորդ բանավեճը տեղի ունեցավ հոկտեմբերի 19-ին Նեվադայի համալսարանում[22]: Թրամփն ընդհատեց Քլինթոնին 37 անգամ, իսկ Քլինթոնը նրան ընդհատեց 9 անգամ: Պետք է նկատել, որ ի պատասխան Թրամփի բացահայտ ագրեսիայի՝ Քլինթոնը կիրառում էր հեգնանք: Այն ներառում էր սուր և հեգնական արտահայտություններ, որոնք ակնհայտորեն նշանակում էին հակառակը, ինչը ասվում էր բառացիորեն և ուղղված էր վիրավորելու Թրամփի զգացմունքները կամ նրան քննադատելուն: Առաջին բանավեճի ժամանակ Քլինթոնը ասաց. "***I have a feeling that by the end of this evening I'm going to be blamed for everything that's ever happened"***, որին հետևեց հանդիսատեսի ծիծաղը [20]: Քլինթոնը նաև հեգնողական արտահայտությամբ պատասխանեց Թրամփին, երբ նա բավականին երկար պարծենում էր իր խառնվածքով, ասելով՝ "***Whew, OK***!" [20] Պետք է նշել, որ Քլինթոնը կիրառում էր «խայթող» պատասխաններ Թրամփի այն մեղադրանքին, թե՝«մենք փող չունենք, որովհետև դրանք վատնվել են ձեր գաղափարների համար», «գուցե դա նրանից է, որ դուք ձեր հարկերը չեք վճարել»: *(We don't have the money because it's been squandered on your ideas"."Maybe it's because you haven't paid your taxes!) [20].*

Թրամփը ի սկզբանե թշնամաբար էր տրամադրված, քանի որ գիտակցում էր, որ իր առջև կանգնած էր փորձառու քաղաքական գործիչ: Նա փորձում էր գերիշխել և մենաշնորհել բանավեճը: Քլինթոնը կարծես կանխատեսում էր Թրամփի յուրաքանչյուր հարձակումը և տալիս էր սուր պատասխաններ. *(Well Donald, I know you live in your own reality, but that is not the facts) [20].*

Հիլարի Քլինթոնը բավականին պատրաստված էր ներկայացել հեռուստաբանավեճին: Նա իր հերթին օգտագործում էր գործիքային ագրեսիա իր ընդդիմադրին սադրելու և հրահրելու համար: Նա մեջբերեց ժամանակին Թրամփի կողմից արված արտահայտություն, ըստ որի նա կանանց անվանել էր *«խոզեր»* և *«շներ»* *"pigs, slobs, and dogs"* և հիշեցրեց մի դեպք, երբ նա քննադատել էր միսս տիեզերք մրցանակակիր Ալիսիա Մաչադոյին իր քաշի համար:

Երկրորդ բանավեճը պատմության ամենահիշարժան բանավեճերից մեկն էր: Լարվածությունն ակնհայտ դարձավ հենց առաջին պահից, երբ ընդդիմադիրները առանց ձեռք սեղմելու, միանգամից գրոհի անցան:

Թրամփը ներողություն խնդրեց իր անպատշաճ արտահայտությունների համար և հայտարարեց, որ լրագրողներն իրեն ճիշտ չեն հասկացել, և, որ նա այդ անպատճաշ արտահայտությունները կանանց վերաբերյալ կատակով է ասել:

"This was locker room talk. I'm not proud of it. I apologized to my family and I apologized to the American people. Certainly I'm not proud of it. But this is locker room talk. You know when you have a world where we have ISIS chopping off heads ... where you have so many bad things happening, this is like medieval times" [21].

Քլինթոնն էլ պատասխանել է, որ Թրամփը չի կարողանա իրեն պատշաճ կերպով դրսևորել նախագահի պաշտոնում, քանի որ նա ունակ է վիրավորել յուրաքանչյուրին և հատուկ թուլություն ունի կանանց նկատմամբ:

"Donald Trump is different. I said starting back in June that he was not fit to be president and commander in chief. And many Republicans and independents have said the same thing. What we all saw and heard on Friday was Donald talking about women, what he thinks about women, what he does to women. And he has said that the video doesn't represent who he is. But I think it's clear to anyone who heard it that it represents exactly who he is"[21].

Թրամփն էլ, իր հերթին, հարձակվեց Քլինթոնի վրա՝ հիշեցնելով նախկին նախագահ Բիլ Քլինթոնի ոչ պակաս աղմկահարույց անցյալը՝ դրանով իսկ փորձելով վատ դրության մեջ թողնել իր մրցակցին:

"What President Clinton did, he was impeached, he lost his license to practice law, he had to pay an 850 thousand dollar fine to one of the women and I will tell you when Hilary brings up the point like that and she talks about words that I said eleven years ago, I thing this disgraceful and I think she should be ashamed of herself if you want to know the truth" [21].

Թրամփի վիրավորական արտահայտություններին հաջորդեց այն, որ նա սպառնաց բանտարկել Քլինթոնին, եթե նա ընտրվի.*"Because you'd be in jail":*

Պետք է նշել, որ Քլինթոնը հանգիստ էր, ժպտում էր և մեղադրում նրան կեղծիքներ տարածելու մեջ: Ամեն անգամ, երբ Թրամփը հանդես էր գալիս հատկապես կոշտ քննադատությամբ, Քլինթոնը պատասխանում էր քմծիծաղով: Երկրորդ բանավեճի ընթացքում Քլինթոնը կիրառում էր մեծ թվով պլանավորված ագրեսիա իր հակառակորդին սադրելու, վնասելու համար, մինչդեռ Թրամփը հավասար չափով կիրառում էր գործիքային և թշնամական ագրեսիա:

Երրորդ հեռուստաբանավեճը կարելի էր անվանել նախագահական մրցավազք: Քլինթոնը գերպատրաստված էր և չափազանց զգույշ: Թրամփին դրդելու և նրա քաղաքական ոճի արդյունավետությունը թուլացնելու ռազմավարությունը կարելի է կապել Քլինթոնի՝ որպես կին քաղաքական գործչի առանձնահատուկ ունակության հետ: Թրամփին բարկացնում էր, երբ Քլինթոնը նրան անունով էր դիմում. "Donald": Ի պատասխան դրան՝ Թրամփը փորձեց ամաչեցնել Քլինթոնին ՝ ցուցադրական հարգանք ցուցաբերելով.*"Secretary Clinton, yes, is that okay?"*

Թրամփը փորձում էր առերևույթ հանգիստ մնալ, բայց երբ Քլինթոնը դրդում էր նրան, նա սկսում էր բարկանալ, գրոհել և անհեթեթ արդարանալ:

CLINTON: You know, he tried to switch from looks to stamina. But this is a man who has called women pigs, slobs, and dogs, and someone who has said pregnancy is an inconvenience to employers, who has said…

TRUMP: I never said that.

CLINTON: …women don't deserve equal pay unless they do as good a job as men.

TRUMP: I didn't say that.

CLINTON: And one of the worst things he said was about a woman in a beauty contest. He loves beauty contests, supporting them and hanging around them. And he called this woman "Miss Piggy." Then he called her "Miss Housekeeping," because she was Latina. Donald, she has a name.

TRUMP: Where did you find this? Where did you find this?
CLINTON: Her name is Alicia Machado.
TRUMP: Where did you find this?
CLINTON: And she has become a US citizen, and you can bet…
TRUMP: Oh, really?
CLINTON: …she's going to vote this November [22].

Քլինթոնը այնպես սադրեց Թրամփին, որ վերջինս անկարող լինելով վերահսկել իրեն, ասաց. *"such a nasty woman":* Այս բանավեճում Թրամփը հանդես եկավ զգացմունքային ագրեսիայով և զայրույթով: Քլինթոնի կողմից կիրառվեց միտումնավոր ագրեսիա:

Ամփոփելով խոսաքային ագրեսիայի մոտեցումները, պետք է նշել, որ թե կին, և թե տղամարդ թեկնածուները դրանք կիրառում էին գերիշխելու, զրպարտելու, միմյանց սադրելու և սեփական իմիջը բարձրացնելու համար: Քլինթոնի խոսքային ագրեսիան միտումնավոր էր և պլանավորված, մինչդեռ Թրամփի խոսքային ագրեսիան ավելի հուզական էր և իմպուլսիվ և հեշտությամբ ենթարկվում էր սադրանքին:

Հակված ենք ենթադրել, որ Թրամփի մոտ բացակայում էին համապատասխան գիտելիքներ, վերլուծական ռեսուրսներ, մինչդեռ Քլինթոնը պատրաստ էր յուրաքանչյուր հարցի, պատրաստ էր յուրաքանչյուր հարձակման եւ հասցրեց Թրամփին թույլ տալ սխալներ, որոնք անարգում էին նրան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. АртемоваА.В. Эмоционально-оценочная объективация концепта “женщина” в семантике фразеологических единиц (на материале английской и русской фразеологии): Автореф. дисс.… канд.филол.наук: 10.02.20. Пятигорск, 2000.
2. Григорян А. А. Состояние и перспективы гендерной лингвистики на Западе в конце XX – начале XXI веков. Иваного: Ивановский гос. ун-т, 2004.
3. Гаспарян С. К., Князян А.Т. Гендерные особенности агрессивного вербального поведения мужчин и женщин (на материале английских и армянских “бытовых” анекдотов. Science and Education. A New Dimension.Philology,v (35),Issue: 125. Budapest, April, 2017, стр.22-24.
4. Гаспарян С. К., Князян А.Т. Гендерные стереотипы в политической сфере современного общества. Филология и культура. Philology and Culture, Выпуск №2(48), Казань, Июнь, 2017, стр.43-49.
5. Картушина Е.А. Гендерные аспекты фразеологии в массовой коммуникации. Автореферат дисс. канд. фил. н. Ижевск, 2003.
6. Седов К.Ф. О манипуляции и актуализации в речевом воздействии // Проблемы речевой коммуникации: Межвуз. сб. научн. тр. / Под ред. М.А. Кормилицыной. Саратов: Изд- во Сарат. ун-та, 2003. Вып. 2. С. 20 - 27.
7. Слышкин Г. Г. Лингвокультурные концепты и метаконцепты : автореф. дис. ... д-ра филол. наук. Волгоград : Волгогр. гос. пед. ун-т, 2004.
8. Телия В.Н. Механизмы экспрессивной окраски языковых единиц // Человеческий фактор в языке: Языковые механизмы экспрессивности / Ин-т языкознания. Отв.ред. В.Н.Телия. М.: Наука, 1991. С.36-66.
9. Фатыхова Ф.Ф. Гендерный аспект возрастных категорий в башкирском языке // Гендер: Язык. Культура. Коммуникация: Докл. Первой международной конф., Москва 26–25 ноября 1999г. М., 2001. С. 347 – 351.
10. Шейгал Е.И. Семиотика политического дискурса. Монография. Волгоград: Перемена, 2000.
11. Baron R. A., Richardson D. R. Human Aggression. New-York: Plenum Press, 1994.
12. Coates J. Women, Men and Language: A Sociolinguistic Account of Gender Differences In Communication. England: Harlow, New York: Longman, 2004. 254 p.
13. Holmes J. Women, Men and Politeness. London: Longman, 1995.
14. Kotthoff H. New Perspectives on Gender Studies in Discourse Anaysis//Гендер: Язык, Культура, Коммуникация: Докл. Первой международной конф., Москва 25-26 ноября. М., 2001.
15. West C. Michelle M.L., Kramarae Ch. Gender in Discourse // Discourse as Social Interaction / Dijk, T.A. van. London: Sage, 1997. p. 119 – 143.
16. Tannen D. The relativity Of Linguistic Strategies; Rethinking Power and Solidarity In Gender and Dominance // Gender and Discourse. Oxford: Oxford University Press, 1994. p. 19 – 52.
17. West C. Zimmerman D. Doing gender // Gender and Society. New York, 1987. № 1. p.125–151.
18. Lakoff R. Language and Women’s Place. New York: Harper and Row, 1975.
19. Footitt H. Women, Europe and the New Languages of Politics. London, New York: Continuum, 2002.
20. https://www.youtube.com/watch?v=855Am6ovK7s
21. https://www.youtube.com/watch?v=FRlI2SQ0Ueg
22. https://www.youtube.com/watch?v=smkyorC5qwc

REFERENCES

1. Artemova A.V. Émocional′no-ocenočnaâ ob″ektivaciâ koncepta «ženŝina» v semantike frazeologičeskih edinici (na materiale anglijskoj i russkoj frazeologii) ` Avtoref. dis.… kand.filol.nauk: 10.02.20. Pâtigorsk, 2000 t’.
2. Grigorân A. A. Sostoânie i perspektivy gendernoj lingvistiki na Zapade v konce XX - načale XXI vekov. Ivanogo: Ivanovskij gos. un-t, 2004 t’ .
3. Gasparân S. K., Knâzân A.T. Gendernye osobennosti agressivnogo verbal′nogo povedeniâ mužčin i ženŝin (na materiale anglijskih i armânskih «bytovyh» anekdotov. Gitut’yun yev krt’ut’yun. Nor hart’ut’yun. Filologia, v (35), T’vogharkum ` 125. 2, 2017 t’., Budapesht, 2, april, 2017 t’.,
4. Gasparân S. K., Knâzân A.T. Gendernee ste stereotipy v političeskoj sfere sovremennogo obŝestva. Filologiâ i kul′tura. Banasirut’yun yev mshakuyt’, Vypusk №2 (48), Kazan′, Iûn′, 2017, str.43-49.
5. Kartušina E.A. Gendernye aspekty frazeologii v massovoj kommunikacii. Avtoreferat diss. Kand fil. n. Iževsk, 2003:
6. Sedov K.F. O manipulâcii i aktualizacii v rečevom vozdejstvii // Problemy rečevoj kommunikacii: Mežvuz. sb. naučn. tr / Pod red. M.A. Kormilicynoj. Saratov: Izd- vo Sarat. un-ta, 2003. Vyp. 2. S. 20 - 27:
7. Slyškin G. G. Lingvokul′turnye koncepty i metakoncepty: avtoref. dis ... d-ra filol. gitk. Volgograd: Volgogr. gos. ped. un-t, 2004 t’
8. Teliâ V.N. Mehanizmy kspressivnoj okraski âzykovyh edinic // Čelovečeskij faktor v âzyke: Âzykovye mehanizmy ékspressivnosti / In-t âzykoznaniâ. Otv.red. V.N.Teliâ. M .: Nauka, 1991. S.36-66.
9. Fatyhova F.F. Gendernyj aspekt vozrastnyh kategorij v baškirskom âzyke // Gender: Âzyk. Kul′tura. Kommunikaciâ: Dokl. Pervoj meždunarodnoj konf., Moskva 26–25 noâbrâ 1999g. M., 2001. S. 347 - 351 t’t’.
10. Šejgal E.I. Semiteika političeskogo diskursa. Monografiâ. Volgograd: Peremena, 2000 t’

The gender aspect of political discourse (manifestation of verbal aggression)

A. T. Knyazyan; Luiza I. Marabyan

Abstract. The article is dedicated to the verbal aggression of women and men in political TV debates. Gender traits are expressed in language in the form of language stereotypes that influence the behavior of men and women. Verbal aggression can vary in degree and manner of presentation from expressions of hatred and malignity to verbal abuse. Depending on the gender, there are differences in the use of emotional vocabulary.

Keywords: *gender; aggression; verbal aggression; political discourse; televised debate; communication.*